Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
դեկտեմբերի 3 -ի N 1390 -Ա որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար Գ. Սարգսյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի N 1390-Ա որոշման հիման վրա, «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության նախագահ Վ. Ի. Յակունինի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա և «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Շ. Ն. Շայդուլլինի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունն ու Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունն ստեղծում են համատեղ հանձնաժողով՝ երկաթուղային փոխադրման ծառայությունների սակագների քննարկման նպատակով։

2. Հանձնաժողովը բաղկացած է վեց անդամից՝ երեքը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության, երեքը՝ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչներ։

3. Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) երկաթուղային փոխադրման ծառայությունների գնագոյացման մեթոդաբանության մշակում.

2) երկաթուղային փոխադրման ծառայությունների սակագների սահմանման, փոփոխման և դրանց հիմնավորվածության վերաբերյալ քննարկումների կազմակերպում.

3) երկաթուղային փոխադրման ծառայությունների սակագների սահմանման, փոփոխման և դրանց հիմնավորվածության վերաբերյալ եզրակացությունը Հայաստանի Հանրապետության կառավարություն և «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն ներկայացնելը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ